Թուրքիան հետևում է Ադրբեջանին՝ լրտեսական սկանդալ սրելով

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 25.02.2024թ.

2024 թ. փետրվարի 20-ին տեղեկություններ հայտնվեցին, որ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT) բացահայտել է Թուրքիայում Ֆրանսիայի հետախուզական վարչության գործունեությունը: MIT-ի գործողության շրջանակներում ձերբակալվել է 3 մարդ՝ իբր, Ֆրանսիայի օգտին շուրջ մեկ տարի լրտեսական գործունեություն ծավալելու համար: Թուրքական ՁԼՄ-ների փոխանցմամբ՝ «լրտեսներից» Ահմեդ Քաթին և ևս երկու անձ ձերբակալվել են MIT-ի և Ստամբուլի ոստիկանության կողմից՝ ֆրանսիական հետախուզության նախազգուշացումից հետո Թուրքիայի տարածքը լքելու փորձի ժամանակ:

Նշենք, որ նման բան Թուրքիայից սպասվում էր դեռ 2023 թ. դեկտեմբերի 4-ից հետո, երբ Ադրբեջանը միջազգային սկանդալ էր հարուցել՝ լրտեսության մեղադրանքով կալանավորելով Ֆրանսիայի քաղաքացի, գործարար Մարտին Ռայանին: Միջազգային ասպարեզում Թուրքիայի և Ադրբեջանի փոխգործակցության փորձը հուշում է, որ այդ երկրները գրեթե միշտ երկուստեք համաժամանակացնում են քայլերը՝ իրենց համար դժվարություններ ստեղծող պետությունների կամ կազմակերպությունների վրա բազմամակարդակ ճնշում գործադրելու համար: Տվյալ դեպքում դա Ֆրանսիան էր, որն, ըստ Բաքվի, հանուն սեփական «շահադիտական» նպատակների, մտադիր է խախտել անվտանգության հավասարակշռությունը Հարավային Կովկասում:

Միևնույն ժամանակ, Անկարան Ֆրանսիայի հետ հարաբերություններում ունի իր սեփական խաղը, որը ներառում է շահերի ավելի լայն հորիզոն, քան՝ պարզապես, Հարավային Կովկասը, և, հետևաբար, «Թուրքիայում ֆրանսիական լրտեսական ցանցի» շուրջ վերջին զարգացումները չպետք է կապվեն միայն Ադրբեջանի հետ խաղակցելու մտադրությունների հետ:

Բանն այն է, որ Ստամբուլում «ֆրանսիացի լրտեսների» կալանավորումը տեղի է ունեցել անմիջապես այն բանից հետո, երբ հայտնի է դարձել ԵՄ Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեում Ֆրանսիայի, Հունաստանի և Կիպրոսի կողմից Թուրքիային անօդաչու սարքեր և հրետանային ռազմամթերքի՝ Ուկրաինային մատակարարման նոր պատվերներ վստահելու որոշման վրա դրված վետոյի մասին: Դրանով Անկարան ցավալի հարված ստացավ՝ զրկվելով իր պաշտպանական արդյունաբերությանը տրամադրվելիք պատկառելի գումարներից: Վերջապես, ոչ պակաս կարևոր էր, որ դա հարված էր թուրքական գոռոզամտությանը:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ «ֆրանսիական լրտեսների» բացահայտումը, նույնիսկ, եթե նրանք իսկապես այդպիսին են, և եթե նրանց գործունեությունը որոշակի ժամանակ վերահսկվում էր MIT-ի կողմից, Անկարան օգտագործելու էր Ֆրանսիայի հետ քաղաքական առճակատման ամենահարմար պահին, որն, ըստ ամենայնի, օրեցօր ընդլայնվում և ձեռք է բերում նոր լարվածություն: